

94

ԱՇՆԱՆԱՅԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱԳՐՈՏԵԽ. ԿԱՆՈՆՆԵՐԸ
Լ.Ղ.Ա.Մ.-Ի ՀԱՄԱՐ
1940—41 թ. թ.

63
L-40

Апр.
12-6527a

63
L-40

«Հացահատիկային կուլտուրանե
րի գծով 3-րդ Հնդամյակը վեր-
ջում ապահովել տարեկան 8 միլի
արդ փութ հացահատիկի բերքը՝
հասցնելով միջին բերքատվու-
թյունը 13 ցենտներին»
(Համկ(բ)Պ 18-րդ ՀԱՄԱԳՈՒ
ՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ)

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱԳՐՈՏԵԽ. ԿԱՆՈՆՆԵՐԸ
Լ.Ղ.Ա.Մ.-Ի ՀԱՄԱՐ
1940—41 թ. թ.

ИИВ. № 18232
~~1818~~



02 MAY 2013

19727

Կազմեց մարզկոդրածնի
գլխավոր ագրոնոմ

Ս. Բ. Ս. Ս. Ս.

Սույն ագրոտեխկանոնները քննարկված ու հաստատված են
Մարզկոդրածնին կից ագրոարտագրական խորհրդակցություներում,
1940 թ-վի սեպտեմբերի 2-ին, մասնակցությամբ Հ. Աթայանի, Մ.
Աղամյանի, Հ. Արզումանյանի, Ս. Առաքելյանի, Ս. Բարսեղի, Լ.
Բալասանյանի, Ա. Գալստյանի, Վ. Խաչոյանի, Ս. Հարություն-
յանի, Ս. Հեյրաթյանի, Ա. Ղուկասյանի, Ա. Նազարյանի, Ս. Քո-
չարյանի, Ա. Քոչարյանի և Թ. Ոհանյանի:

Հաստատված է Մարզավետի գործկոմի նիստում 1940 թ.
սեպտեմբերի 4-ին:



3999-91

Գ Ո Տ Ի Ն Ե Ր

Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզում աշնանացան
ե արվում հողակլիմայական տարբեր պայմաններ ունեցող տա-
րածությունների վրա: Բոլոր տեսակի հողերի համար մշակման
միատեսակ ձև՝ ագրոտեխնիկա չի կարելի կիրառել: Ագրոտեխ-
կանոնների մասնատման և ըստ տեղերի վորոշ չափով ճշտելու
նպատակով ԼՂԱՄ-ը բաժանել ենք յերեք զոտու:

ա) Դաշտային (նախալեռնային) գոտի, վորն ընդգրկում է
մոտ 96600 հեկտար տարածություն, բունում է մարզի արեվել-
յան մասը և ունի 150—600 մետր բարձրություն (Ճ. մ.), տե-
ղումների տարեկան գումարը շուրջ 420 միլիմետր է և ջերմու-
թյան միջինը 13 աստիճան (Ց.), մինիմումը ջերմաստիճանը
փեարվարին—13,1:

Այս զոտու մեջ են մտնում բամբակային յենթաշրջանը,
Խանարաղը, Ասկերանը, Ղզղալան, Մուղանլիի, Կուրապատկինի,
Աղբուրունի, Գեվորգավանի, Ամարասի, Ոխչիի, Սորջայի և Ա-
ռաքյուլի շականակազույն հողերի զանգվածները:

բ) Միջին լեռնային գոտի, վորն ընդգրկում է մոտ 113500
հեկտար տարածություն գերակշռող շականակազույն և անտառա-
տափաստանային վարելահողերով, հյուսիսից հարավ նեղ շերտ
է կաղմում, վորի բարձր կետերն են՝ Թալիշ, Տոնաշեն, Մեծ
շեն, Զանյաթաղ, Հայաղ, Թբղուն, Սեյդիշեն, Խանցկ, Դահ-
րավ, Կրկժան, Շոշ, Զանախչի, Սարգսաշեն, Մեծ-Թաղար, Տող,
Մուխրենես, Վորդնաշատ, Ծամձոր, Բարագլուխ գյուղերը:

Այդ զոտին ընկած է մինչև անտառների սկիզբը, տարեկան
մթնոլորտային տեղումների գումարը շուրջ 540 միլիմետր է և
ջերմության միջինը 10,9 աստիճան (Ցելսիուսի), իսկ մինիմումը
ջերմաստիճանը—15,5:

գ) Բարձր լեռնային գոտի, վորն ընդգրկում է անտառային
ու արոտային մասսիվները՝ մոտ 235500 հեկտար տարածու-
թյամբ, ունի տեղումների տարեկան գումար՝ 652 մ. մ., ջեր-
մության միջինը 8,3 աստիճան (Ցելսիուսի), մինիմումը փեարը-
վարին—19,1 աստիճան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ագրոտեխոլոգիաների կիրառման դեպքում
բարձր լեռնային զոտու արեվկոզ (գյունե) լանջերը կարելի չէ հավա-
տարեցնել միջին լեռնային զոտուն, իսկ վերջինիս նույն տեսակի լան-
ջերը՝ դաշտային զոտուն:



ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱՆ

Ագրոտեխկանոններն ընդհանուր ուղեցույց են, իսկ հողն ու բույսը կենդանի որգանիզմներ, վարանց հետ գործ ունեցող պիտի հասկանա նրանց լեզուն հետեվի և ամեն անգամ ըստ դրուբյան ու պահանջի լրացուցիչ ու կոնկրետ միջոցներ գործադրի բարձր բերքատու-թյունն ապահովելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՐԿ

Հիմնական կոչվում է այն հերկը, վորը կատարվում է առաջին անգամ՝ մինչև ցանք անելը, լրիվ խորությամբ (սև ցել, զարնան ցել, ամառային հերկ ու խողանատեղի վարը):

1. Նախքան հիմնական հերկ անելը պետք է հողամասը նախապատրաստել, այսինքն գոլթանի ընթացքը խանգարող մեծ քարերը և թփերը քանդել, դուրս տանել, առաջացած փոսերը հողով լցնել ու հավասարեցնել: Թփուտները քանդել 35 սմ. վոչ պակաս խորությամբ:

2. Գոլթանի ընթացքը խանգարող խողանը և մուլխոտե-րը հարել, հավաքել, մեծ կույտեր դնել դաշտի ծայրում, հողով ծածկել ու դրանից բուսազը պատրաստել: Իսկ յեթե դաշտը վարակված է ֆլասատուներով, կույտերը վառել, պահպանելով հակահրդեհային կանոնները:

3. Կոլխողը հողի նախապատրաստման հետեվյալ առաջա-դրանքն է սահմանում.

Միջոցառում	Հողամաս	Բրիգադ	Ոլակ	Ք ա ն ա կ ը
Քոլ քանդել				

Ս Ե Վ Ց Ե Լ

Սեվ կոչվում է այն ցելը, վորը կատարվում է ցանքից մի տարի առաջ՝ աշնանը, լրիվ խորությամբ և պահվում է փուխը ու մաքուր վիճակում մինչև հետագա աշնան ցանքը:

Մեկ ցելը կատարվում է հանգստացած հողերի վրա կամ նույն տարում ազատված արտատեղերում:

4. Մինչև հիմնական հերկ անելը, նրանից առնվազն 15—20 որ առաջ, սև ցելի համար առանձնացրված հողամասի վրա պետք է խողանավար կամ յերեսավար անել բազմախոփ գոլթանով (կլպիչներով), իսկ դրանց բացակայության դեպքում այլ գործիքներով, 6—8 սանտիմետր խորությամբ, վորպեսզի այդդ աշտում յեղած բուսական մնացորդները հողի հետ խառնվե-լով քայքայվեն, իսկ թափված սերմերը բուսեն ու հիմնական հերկի միջոցով շրջվեն, հողի հետ խառնվեն ու քայքայվեն: Բուսական մնացորդների քայքայումով հողը հարստանում է պարուրտանյութերով:

5. Սեվ ցելը կատարել գոլթանով 20—22 սանտիմետր խո-րությամբ աշնան անձրեփների հետ՝ հոկտեմբեր—նոյեմբեր ա-միսներին և այդ վիճակում թողնել մինչև գարուն: Բարակ վա-րելաչերտ ունեցող հողերում հերկը կատարել ավելի յերես՝ 18 սմ.: Ձմեռվա ընթացքում խոնավություն է կուտակվում սև ցե-լում, հողը փխրանում է, մուլխոտերի սերմերն ու ֆլասատու-ները մասամբ փչանում են:

6. Կոճղարմատ և ճտատող բազմամյա մուլխոտերով վա-րակված դաշտերում սև ցելը (հիմնական հերկը) կատարել հու-լիս ամսին, կամ ոգոստոսի առաջին տասնորյակում, վորպեսզի արևը թակի և մուլխոտերի արմատները չորանան. ել դալարել չկարողանան: Այս դեպքում հերկելուց հետո մինչև անձրեփների գալը ցելը չպիտի ցաքանել:

7. Ամառվա ամիսներին կատարած սև ցելի վրա մուլխո-տերը կանաչելուց պետք է մի քանի անգամ կրկնահերկել, մո-լխոտերի արմատները յերկաթե ցաքանով յերես հանել, հավաքել ու դաշտից դուրս տանել:

8. Բարձր լեռնային գոտում ամառը կատարած սև ցելը պետք է անմիջապես ցաքանել ու մուլխոտերի արմատները հավաքել, դուրս տանել:

Աշնան ընթացքում 1—2 անգամ կրկնահերկել ու մուլխո-տերի արմատները զիզգազելով յերես հանել ու հավաքել:

9. Փարնանը, ձյունից և անձրեփից հետո սև ցելը յերկա-թե ցաքանով 1—2 անգամ ցաքանել՝ հողում խոնավությունը պաշտպանելու և հողի պնդացած յերեսը փխրացնելու համար:

10. Յեթե սև ցելերի վրա գարնան ընթացքում մոլախոտեր են բուսնում, հարկավոր է բազմախոփ գուլթանով յերեսս վար կամ կուլտիվացիա անել 10—12 սանտիմետր խորությամբ՝ դաշտային գոտում մարտ ամսում, միջին գոտում՝ ապրիլ ամսում, բարձր լեռնային գոտում՝ մայիս ամսում:

Գ Ա Ր Ն Ա Ն Մ Ա Ք ՈՒ Ր Ց Ե Լ

Գարնան մաքուր ցել է համարվում այն հիմնական հերկը, վորը կատարվում է դարնան ամիսներին, վոչ մի կուլտուրայով չի զբաղեցրվում և խնամվում է աշնանը ցանելու համար:

11. Գարնան մաքուր ցելերը կատարել նախախոփիկ ունեցող կուլտուրական գուլթանով 20—22 սմ. խորությամբ, բարակ վարելաչերտ ունեցող հողերում՝ մինչև 18 ս. մ., դաշտային գոտում՝ փետրվար-ապրիլ ամիսներին, լեռնային գոտիներում՝ ապրիլ-մայիս ամիսներին: Այս ժամկետներից հետո կատարված ցելերն ա վելի ցածր բերք են տալիս և խորհուրդ չեն տրվում:

12. Դրված ժամկետներն իրենք ասում են, վոր չի կարելի ցելելու համար առանձնացրած հողերի վրա բնական խոտը հարել ու հետո ցել անել: Վարելահողը պետք է վարելահող լինի և համապատասխան մշակում ստանա, իսկ խոտահարի տարածութունը պիտի առանձին լինի:

Յերկրագործության մեջ ընդունված ձև է, վորոչ տեսակի ընդեղեններ ցանելն ու կանաչը գուլթանով շրջելն՝ իբրև հողը պարարտացնելու միջոց: Այդ միջոցը կոչվում է կանաչ պարարտացում:

Վարելահողերի վրա բուսած կանաչը հողի բարակ շերտով գուլթանի նախախոփիկը կտրում, գցում է ակոսի հատակին, վորը հետեվից յեկող մեծ խոփը հողի հասա շերտով (պատագ, առ) ծածկում է: Այդ կանաչը քայքայվում ու պարարտացնում է հողը:

13. Ցելելու հետ գուղընթաց պետք է հերկած հողը ցաքանել 1—2 անգամ:

14. Թե սել և թե գարնան մաքուր ցելերը պետք է ամառվա ընթացքում խնամել, այսինքն բոլոր միջոցները ձեռք առնել, վոր հողի յերեսը չպնդանա, չկեղեվակալի, կանաչով չը ծածկվի և խոնավութունը մնա հողի մեջ: Անկախ նրանից թե հողը ջրով է՝ խոնավութունը պիտի պահպանել, վորպեսզի ջրի

առկայությամբ հողում բույսերի հարկավոր սննդարար նյութեր պատրաստող բնախոսական պրոցեսները շարունակ տեղի ունենան ու հողը պարարտանա:

Բացի դրանից հողում պահպանած խոնավութունը ոժանդակում է զցած սերմերի արագ ու միահամուռ ծիլեր արձակելուն:

Ամառային խնամքի միջոցներ են՝

ա) անձրեվներից հետո հոնիսին՝ կուլտիվացիա և ցաքանում:

բ) Հուլիս և ոգոստոս ամիսներին՝ ցաքանում:

15. Ցելերը կանաչելու ղեպքում յերեսավար կատարել ամառվա ընթացքում թեվերը հանած բազմախոփ գուլթանով, վորպեսզի առը շուռ չտա ու հողի խոնավ շերտը չչորանա: Այդ նպատակով յերեսավարը պետք է միաժամանակ ցաքանել ու յերեսը հարգացնել:

16. Յուրաքանչյուր առանձին հողամասի վրա, նայած թե ինչպիսի մոլախոտերով է վարակված, պետք է խնամքի հատուկ միջոցներ գործադրել այնպես, վոր ցելի հիմնական նպատակին հասած յիննք՝ պահպանել հողը փուխը վիճակում, չը կորցնել խոնավութունը և վոչնչացնել մոլախոտերը:

Կուլտուրը ցելի և նրա խնամքի հետեվյալ առաջադրանքներն է սահմանում:

Միջոցառում	Հողամաս	Դործիք	Խորութուն	Բրիզող	Ողակ	Բանակ	Ժամկետ
Սև ցել անել							

Չ Բ Ա Ղ Վ Ա Մ Ց Ե Լ

Չբազված ցել են կոչվում խոպան, յերկու և ավելի տարի հանգստացած կամ բազմամյա խոտերի տակից ազատված այն հողամասերի ցելերը, վորոնց վրա գարնանը շաքահերկ կամ թիթեռնազգի կուլտուրաներ են ցանվում և նույն տարում աշնանացան արվում:

Յեւ զբաղեցնող կուլտուրաներ են վիկան, սիսեւը, տափվո-
լոսը, կարտոֆիլը, կորեկը (վերջինս միայն շարքահերկ մշակման
պայմաններում):

17. Զբաղեցրած ցելահողի հերկը կատարել աշնանը կամ
ձմեռվա ընթացքում, ցանվելիք զարնանացան կուլտուրայի պա-
հանջած խորութեամբ: Կրկնահերկել զարնանն ու ցանել նախա-
տեսված կուլտուրան, համապատասխան մշակում տալ բերքա-
հավաքի ժամանակ խողանավար անել 8—10 սմ. խորութեամբ
և այդպես թողնել մինչև նախացանքային հերկը:

Խ Ո Ջ Ա Ն Ա Վ Ա Ր

18. Խողանավար կատարել 8—12 սմ. խորութեամբ թեւիերը
հանած գութաններով (ցանկալի յե բազմաշոտփանի) այն
բոլոր արտատեղերում, վարոնց վրա աշնանացան ե արվելու:

19. Խողանավարը պիտի կատարել նախորդ կուլտուրայի
բերքահավաքի ժամանակ, վոչ ուշ քան մինչև 3 որը: Ուշացնե-
լու դեպքում հողը չորանում ե և հերկը խողանավար չի դառ-
նում: Այդ հաշվով խողանավարը կատարում են սկսած հունիս
ամսից մինչև ոգոստոսը:

20. Խողանավարի միջոցով հողում պահպանում ենք խոնավու-
թյունը, նպաստում բուսական մնացորդների քայքայմանը,
մոլախոտերի սերմերի ծլմանն ու հետագայում քայքայմանը,
հիվանդութիւնների ու վնասատուների վոչնչացմանը, և ընդ-
հանրապես հողի սննդապաշարի շատացմանը:

Կոլխոզը խողանավարի հետեվյալ առաջադրուներն ե սահ-
մանում:

Հողամաս	Բրդազ	Ողակ	Ինչ գործիքով	Խորութիւնը	Քանակը	Ժամ- կետը

Պ Ա Ր Ա Ր Տ Ա Ց Ո Ւ Մ

21. Պարարտացանի նշանակում ե հողի մեջ մտցնել բույսե-

րի համար պահանջվող սննդարար նյութեր, վորոնք արվում են
պարարտանյութերի ձեւով:

Պարարտանյութերը լինում են որգանակալ (գոմաղբ, բու-
սաղբ, կոմպոստ, ծիրտ և այլն) անորգանակալ կամ հանգային
(ազոտային, ֆոսֆորային, կալիական հանքանյութեր ու դրանց
խառնուրդներ):

Ինչպես պարարտացումը, նույնպես և բոլոր ազրոմիջոցա-
ռումները պետք ե կիրառել կոմպլեքս ձեւով, մեկը մյուսի հետ
կապված, թե չե նրանք ուզած արդյունքները չեն կարող տալ:
Պարարտանյութերը բարձրացնում են բերքատվութիւնը, մաս-
նավորապես բույսերի ցրտադիմացկունութիւնը: Պարարտացրած
արտը ձմեռվա ընթացքում համարյա չի ցրտահարվում:

22. Գոմաղբը, բուսաղբն ու կոմպոստը, բացի նրանից,
վոր հարստացնում են հողը սննդարար նյութերով, այլև լավա-
ցնում են հողի կազմվածքն ու կառուցվածքը:

Գոմաղբը պետք ե մտցնել միջին հաշվով հեկտարին
20—30 տոնն, բարձր ազրոտեխնիկայի պայմաններում մինչև
40—50 տոնն: Մտցրվող գոմաղբը պետք ե հասունացած լինի:

Որգանակալ պարարտանյութերը պետք ե մտցնել հիմնա-
կան հերկ կատարելիս (սեւլ ցել, գարնան ցել, զբաղեցրած ցել)
և կրկնահերկի ու նախացանքային հերկի ժամանակ, դաշտում
փռելուց անմիջապես հերկել ու հողի հետ խառնել, չթողնել, վոր
յերկար փռած մնան ու չորանան:

23. Արգելել տեղափոխած գոմաղբը դաշտում մանր կույ-
տեր դնելը:

24. Զմեռվա ընթացքում տեղափոխված գոմաղբը կարելի
յե դաշտի ծայրում կամ ճանապարհի կողմով 3,5—4 մետր լայ-
նութեամբ, 1,5—2 մետր բարձրութեամբ մեծ կույտեր դնել,
10—20 ս. մ. հաստութեամբ հողի շերտով ծածկել ու պահել մին-
չեւ գարնան հերկը:

25. Դաշտային չոր գոտում գոմաղբը պետք ե մտցնել ցան
քից մի տարի առաջ, վորովհետեւ դեռ նոր պարարտացրած հո-
ղում արտը ջրի պակասութեան պատճառով «այրվում ե»:

26. Ցողունային մրիկով վարակված ցորենի ցանքսեր ունե-
ցող կոլխոզներում գոմաղբ պետք ե մտցնել վոչ թե անմիջա-
պես ցորենի տակ, այլ նրան նախորդող կուլտուրայի տակ, և
առհասարակ գոմաղբ մտցնել առաջին հերթին գարու տակ:

27. Հանքային պարարտանյութեր մտցնել հեկտարին առ-

նըվազն (մինիմում)՝ 30 կիրոգրամ ազոտի ու 45 կիրոգրամ ֆոսֆորի հաշվով՝ դաշտային գոտում ու լեռնահովիտներում, իսկ սարալանջերին՝ 30 կիրոգրամ ազոտ ու 70 կիրոգրամ ֆոսֆորի հաշվով:

28. Հանքային պարարտանյութերը մտցնել հիմնական հերկը կատարելու ժամանակ: Ձեռքով մտցնելու դեպքում, մինչև եվ հերկելը, հողամասը հավասար՝ 0,1 հեկտարանոց վանդակներ թափանել, պարարտանյութը հավասար շաղ տալ ու անմիջապես հերկել:

29. Հանքային պարարտանյութերը շաղ տալ կրճած, լավ մանրացրած վիճակում:

30. Կոլխոզը պարարտացման հետեվյալ առաջադրանքներն է սահմանում.

Պարարտանյութ	Հողամաս	Նորմա	Բերվող	Ողակ	Քանի հեկտար	Ժամկետ
Կոմպոստ						

ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՀԵՐԿ ՈՒ ԿՐԿՆԱՀԵՐԿ

31. Ոռոգանավարի հիմնական ու նախացանքային հերկերը ամրակնում, միաժամանակ են կատարվում և պետք է կատարել ցանքից 25—30 որ առաջ լրիվ խորութեամբ՝ 20—22 ս. մ., բարակ վարելաչերտ ունեցող հողերում՝ 18 ս. մ.: Ցանքից 30—40 որ առաջ հիմնական հերկ կատարել նաև այն ուշահաս արտատեղերում, ցելավոտերում, վորոնք մինչ այդ չեն մշակվել:

32. Ցելահողերը կրկնահերկել ցանքից 15—20 որ առաջ լրիվ խորութեամբ:

Նախացանքային հերկի ու ցանքի միջև ընկած ժամանակամիջոցում հողը թեթեվ նստում է, յուր մեջ զցած սերմերին ընդհուպ կաշուում և լավ պայմաններ ստեղծում նրա հաջող ծըրման ու աճման համար:

Քարմ հերկի վրա ցանք անելուց հետո հաճախ հողը նըստում է, բույսի թփակալման հանգույցը մնում է հողից գուրս ցցված կամ հողի մասնիկները նրա արմատներից պոկվում, իջ-

նում են և բույսը չորանում է կամ ցրտահարվում:

33. Նախացանքային հերկի ժամանակ պետք է հողը ճուժեր չզցի, կոշտեր չտա և հողակտորները 5 սանտիմետրից մեծ տրամագիծ չունենան:

Այդ հերկի ժամանակ պետք է հողն անպայման գուլթանավարի հետեվից փոցխել, ցաքանել:

34. Հողի բոլոր տեսակ հերկումների ժամանակ արգելվում է ձևավոր վարը, թուլյատրվում է կատարել վարը խպեպ կամ լղարակ, նայած հողամասին:

35. Բոլոր տեսակի կրկնահերկերը կատարել նախկին վարին ուղղահայաց կամ թեք ուղղութեամբ, վորպեսզի հողը կտըրտվի, ճումերը փշրվեն:

36. Արգելել վարած հողը կոխոտելը կամ ցելերի վրա անասուններ արածացնելը:

ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ ՀՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

Հացահատիկային կուլտուրաների սերմերի լավացման միջոցառումների մասին ՄՍՌՄ-ի Ժողկոմսովետի 1937 թ. հունիսի 29-ի վորոշման հիմամբ բոլոր կոլխոզները պետք է ունենան ցանվող կուլտուրաների հատուկ սերմաբուծական ցանքեր:

Սերմերի բերքատվութունը կարելի չէ բարձրացնել, յեթե այն խնամքի առանձնահատուկ լավ պայմաններում է աճեցըրվում:

Հողն այն միջավայրն է, վորտեղ բույսն աճում, զարգանում է և ամենաառաջնակարգ նշանակութուն ունեցող պայմանըն է հանդիսանում:

37. Աշնան ցորենի ու վարու սերմնաբուծարանների համար, մինչև ցանքն սկսելը, հողամասն առանձնացնելու այն ամրացնել մշտական սերմնաբուծական ողակի կամ շատ լինելու դեպքում՝ յերկու ողակի:

38. Սերմնաբուծական հողամասերի քանակը պետք է այնքան լինի, վոր նրանցից ստացվելիք սերմի քանակը բավարարի տվյալ կոլխոզի գալիք տարվա ցանքսային ամբողջ տարածութունը ցանելուն, սերմի ապահովագրական սեփական ֆոնդը փոխարինելուն և պետ. սերմ. ֆոնդին հանձնման պլանի կատարումն ապահովելուն:

39. Սերմնաբուծարանի համար պետք է առանձնացնել ամենալավ հողերը, վորոնք վաղ ցելված են, հետագայում մշակ-

ված: Գարարտանյութերն առաջին հերթին պետք է տալ սերմնաբուծական հողերին:

40. Սորտերը խառնելուց զերծ պահելու համար հացահատիկի աակից դուրս յեկած հողամասը չպետք է աշնանացանի սերմնաբուծարան դարձնել:

41. Սերմնաբուծարանների հողամասերի փոփոխությունը զգալի չափով բավարար ազդեցություն է թողնում սերմի վորակի վրա, դրա համար շարունակ միևնույն կուլտուրայի համար նույն հողը սերմնաբուծարան չպիտի դարձնել:

42. Կոլխոզը սերմնաբուծարան է առանձնացնում:

Հողամաս	Բանակ	Ինչ վիճակում	Կուլտուրա	Սորտ	Բերեցող	Ողակ

ՍԵՐՄԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

43. Սերմային ֆոնդերն առանձնացնել ցանքային պլանային ամբողջ տարածություն պահանջի չափով:

Սերմֆոնդ առանձնացնել սերմնաբուծարանների բերքից, անկախ նրանից, թե ապրոքացիայի ժամանակ տեսակավոր (սորային) է ճանաչված, թե վոչ: Այն կոլխոզները, վորոնք ստիպված կլինեն սերմֆոնդ առանձնացնել խոտանված սերմնաբուծարաններից կամ շարքային հատիկից, պարտավոր են շրջհողբաժնի միջոցով փոխանակել այն տեսակավոր սերմացվով:

44. Սերմֆոնդն առանձնացնել կալսման ժամանակ միայն մանրակրկիտ զտումից հետո: Սերմացու հատիկը զտել սերմազախ մեքենաների, տրիբերների, տեսակավորիչների վրա և հասցրնել մաքրություն կոնդիցիոն դրություն՝ ջոկելով և անջատելով կողմակի կուլտուրաների, մոլախոտերի սերմերն ու անկենդան աղբը, քարերն ու հողը:

45. Սերմնաբուծարաններից ստացած հացահատիկն արգելվում է տնտեսական այլ նպատակների համար ոգտազործել: Միայն սերմֆոնդի առանձնացումից հետո ավելացած քանակը

հողբաժնի ու ՄՏԿ-ի պլանով բաց թողնել փոխանակման կարգով այլ կոլխոզների և թույլատրել ավելցուկը տալ հացահանձման հաշվին կամ պետապահովագրական ֆոնդին:

46. Մինչև հացահանձման պլանի կատարումը թույլատրվում է սերմֆոնդերի առանձնացում կատարել միայն այն սերմնաբուծարաններից, վորոնց քանակությունը չի անցնում ընդհանուր ցանքի տարածության 12 տոկոսից (ՀԿ(բ)Պ ԿԿ յեվ ՍՍՌՄ ԺԿՄ-ի 1940 թ. ոգոստոսի 28-ի վորոշումից):

47. Փոխանակման կարգով կամ հանձման համար սերմացու բաց թողնող կոլխոզը պարտավոր է ամեն անգամ ստացողին սորտային վկայական տալ ապրոքացիոն ակտի և սերմաբորատորիայի վորակական ստուգման վկայականի հիմամբ:

48. Սերմնաբուծարանների սերմացուները պիտի ապրոքացիայով ճանաչված լինեն սորտային մաքրություն առաջին կատիգորիայի (99 տոկոսից բարձր) կամ յերկրորդ կատեգորիայի (97—99 տոկոս): Սերմաբուծարանների սերմերի մի մասն ամեն ասրի պետք է սորտվերանորոգման կարգով ստացվի շրջանային սերմնաբուծական կոլխոզից: Սերմնաբուծարաններում պետք է ցանել նաև կոլխոզում կորա և փունջ արած սերմերը: Սերմնաբուծարանի բոլոր սերմացուները պետք է պահել առանձին, թույլ չառաջված խառնվելու ընդհանուր հատիկի հետ:

49. Սերմնաբուծարանում ցանել կարելի յե այն սերմերը, վորոնք ըստ վորակի պատկանում են առաջին դասին, այսինքն վորի մաքրությունը 99 տոկոսից ցածր չե, ծրուհակությունը 95 տոկոսից քիչ չե և մեկ կիլոգրամի մեջ մոլախոտերի ու այլ կուլտուրաների սերմերից հինգական հատից ավել չկա: Միայն առաջին դասի սերմի բացակայությունը դեպքում թույլատրվում է զործադրել յերկրորդ դասին պատկանող սերմացուն:

50. Թե սերմնաբուծարաններում և թե ընդհանուր տարածությունների վրա ցանել կարելի յե ապրոքացիայով սորտային ճանաչված սերմերով՝ լինի դա սելեկցիոն, թե տեղական:

51. Մինչև այժմ ընդունված սորտայինացման համաձայն խորհուրդ է տրվում ցանել հետևյալ սորտերը. ցորեն «Սրանդանի», տեղական Ղարաղլչղ ու Ջարգա՝ զաշտային ու միջին գոտիներում: Սպիտակահազ ու կարմրահազ պլուրգյանիներ բարձր և միջին լեռնային գոտիներում: Շիրվանդանի ու տեղական սպիտակ գարի ԼՂՄՄ-ի ամբողջ տերիտորիայում: Միևնույն կոլխոզում բազմասորտ ցանքսերը պիտի համարել թե-

ընթացումն և ցանկը քիչ թվով, բայց բարձր ու կայուն բերքատու սորտեր: Կոլխովն ինքն է ընտրում յուր պայմաններում բարձր բերք տվող սորտերը պետութայն կողմից հաստատված սորտաչոնացման սահմանում (Համկ(բ)Պ ԿԿ և ԺԿՍ-ի 1940 թ. հունվարի 17-ի վորոշումից):

Հաս ընդունված պլանի կոլխովը պիտի սերմ առանձնացնի հետեվյալ քանակով.

Կուլտուրա	Սորտ	Բանի հեկտարի	Հեկտարին քանի կիլոգրամ	Ընդամենը քանի ցենտներ

52. Սերմացու հացահատիկը պետք է առանձնահատուկ պահեստ ընդունել լավ չորացնելուց հետո, այնպես, վոր խոնավությունը 15 աստիճանից բարձր չլինի և ատամի տակ կոտրելուց չբխոց հանի:

Սերմացուն պահել չոր, քամանցուկ և ախտահանված պահեստներում մեկ ու կես մետրից վոչ ավել շերտով, տեղափոխումներ կատարել ախտահանված ջվալեղենում:

Սերմացուն պահեստում պետք է պարբերաբար ստուգման յենթարկվի նախագահի ու պահեստապետի կողմից: Տարբեր սորտեր պետք է պահեստի սուանձին բաժանմունքներում պահվեն և այդ բաժանմունքներին, տակառներին կամ ամբարների պետք ի կպցրված լինեն ցուցատախտակներ (ետիկետներ), վորոնց վրա գրված լինեն՝ ինչպիսի ֆոնդ է— սերմնային թե սերմ ապահովագրական, կուլտուրայի անունը, սորտը, սորտային մաքրությունը (սորտ վկայականի կամ ապրոբացիայի ակտի հիմամբ), քանակը և սերմ-լաբորատորիայի անալիզի արդյունքը՝ մաքրության ու ծլունակության տոկոսը:

53. Սերմացուն ագրոկանոնների համաձայն ընդունելուն, պահելուն և բաց թողնելուն պատասխանատու յեն կոլխովի նախագահն ու պահեստապետը:

ՍԵՐՄԵՐԻ ՎՈՐԱԿԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ

54. Բոլոր տեսակի սերմերն ամբողջությամբ, թե նույն

տարում ցանելիքը և թե ապահովագրական ֆոնդինը, պետք է վորակական ստուգման յենթարկվեն վերահսկիչ սերմային լաբորատորիայում:

55. Լաբորատորիայում անալիզի յենթարկելու համար սերմերի նմուշներ կարող են վերցնել ագրոնոմները և այն անձինք, վորոնք դրա համար կունենան հատուկ վկայական կամ զբավոր լիազորագիր շրջնայրաժնի վարչի ու ավագ ագրոնոմի ստորապրությամբ:

56. Նմուշներ կարել յե վերցնել միայն սերմացուն տեսակավորելուց ու զտելուց հետո:

57. Սերմ-լաբորատորիայի կողմից մաքրությամբ ու վարակվածությամբ վոչ կոնդիցիոն ճանաչված սերմերը կրկնակի, յեռակի անգամ զտման յենթարկել, վորից հետո նորից ստուգման ուղարկել: Վերջնականապես վոչ կոնդիցիոն ճանաչված սերմացուն փոխանակել կոնդիցիոն սերմերով: Սրգելել ցանքս կատարել վոչ կոնդիցիոն և չստուգված սերմերով:

58. Նկատի ունենալով, վոր հնձելուց հետո ցորենը մոտ մեկ, իսկ գարին՝ 2 և 2,5 ամսվա ընթացքում շարունակում են հասունանալ, առանց վորի թարմ, դեռ նոր հնձածները բարձր ծլունակություն չեն ունենում, անհրաժեշտ է բարձր լեռնային գոտում ցանքի համար գործադրել նախորդ տարվա բերքի հատիկը, այն առանձնացնել աստիճանաբար, տարեց-տարի լրացցնել սերմնային ֆոնդը, վորն այնուհետև ամեն տարի հարկավոր կլինի նոր բերքով միայն փոխարինել: Բարձր լեռնային գոտում նմուշները վերցնելուց ահտում ցույց տալ սերմնացվի հնձի ժամկետը:

ՍԵՐՄԵՐԻ ԹՈՒՆԱԽԵՂԳՈՒՄԸ

59. Ցանվող ցորենի ու գարու բոլոր սերմերը պետք է պարապիր կերպով թունախեղդել ֆորմալինով, թաց յեղանակով, 40 տոկոսանոց մեկ մաս ֆորմալինին 300 մաս ջուր խառնած: Թունախեղդման գործը պետք է կատարել ագրոնոմների ղեկավարությամբ, հատկապես ստուգված, կուրսեր ավարտած ու շրջնողբաժնի կողմից լիազոր վկայական ունեցող թունախեղդողների ձեռքով:

60. Թաց թունախեղդումը կատարել հետեվյալ կերպ. սերմացու հացահատիկը խաշար (նուր գործված) մեշոխներում կամ կողոփներում խորասուզել ֆորմալինի լուծույթ պարունակող տա

կառի մեջ, պահել 3—5 ըրպե, վորից հետո հանել 2—3 ընպեյով քամ դնել, թափել գետնին փռած բրեզենտի կամ տախտակի հատակի վրա, ծածկել նույն լուծույթով ախտահանված կտավով կամ այլ կտորով: Այդ կույտի մեջ հատիկը պահել 2 ժամ, վոր ֆորմալինի գոլորշին սպանի մրիկի սպորներին, վորից հետո շվաքում փռել, վոր սերմի մակերեսը չորանա, փշաշի:

Չոր հողում ցանելու համար սերմերն այնքան չորացնել, վոր խոնավութունը հասցրվի 15 աստիճանի:

Առանց չորացնելու, թաց սերմերը չոր հողում ցանել չի կարելի:

61. Թունախեղդման համար տարբեր կոնցենտրացիայի (խտության տոկոսայնության) ֆորմալին ստանալուց համապատասխանաբար փոխել խառնուրդի հարաբերությունը: 30 տոկոսանոց 1 մաս ֆորմալինին խառնել 225 մաս ջուր:

62. Մի տոնն հացահատիկը թունախեղդելու համար պահանջվում է 100 լիտր լուծույթ կամ մի կիլոգրամ 40 տոկոսանոց ֆորմալինով կարելի յե ախտահանել 30 ցենտներ հացահատիկ: Այդ հաշվից յեղնելով մի տոնն հացահատիկին ծախսը վում է 333 գրամ 40 տոկոսանոց ֆորմալին:

63. Յեթե սերմերը փոշեմրիկով կամ տերեվի բծավորությամբ վարակված են՝ յենթարկել այն տերմիկական թունախեղդման: Փոշեմրիկի վարակող սնկերն ու սպորները գտնվում են հատիկի ներսում, դրա համար ել սերմլաբորատորիայում ստուգված սերմը նախապես տաքացրվում է 4 ժամվա տեվողությամբ 28—32 աստիճան (Ց) ջերմություն ունեցող ջրում և հետո ակտիվ—8 ըրպեյի ընթացքում 52 աստիճան (Ց) ջերմության ջրում, կամ 53 աստիճան ջրում 7 ըրպեյի ընթացքում, վորից հետո սերմը փովում և չորացվում է: Տերմիկական թունախեղդումը կարելի յե կատարել ցանքսից 1—1,5 ամիս առաջ, միայն անմիջապես չորացնել ու հասցնել խոնավության նորմալ աստիճանին ու պահել ինչպես հարկն է:

Յ Ա Ն Ք Ի Ժ Ա Մ Կ Ե Տ Ն Ե Ր Ը

64. Ցանքի ժամկետները մեծ ազդեցություն ունեն բերքատվության չափի վրա:

Մնժամանակ կատարած ցանքը ցածր բերք է տալիս կամ յերբեմն էլ փչանում է:

Աշնանացան հացահատիկը պետք է մինչեվ ձմեռման գընալը թփակալի, այլապես ուշ ցանքերը չեն կարողանում թփակալել և ձմեռվա ընթացքում ցրտահարվում են:

65. Ցանքը վերջացնելու որինակելի ժամկետներ է վորոշվում—

Բարձր լեռնային գոտում	հոկտեմբերի 10-ը,
Միջին » »	» 20-ը,
Դաշտային՝ նախալեռնային գոտում	» 25-ը,

Ցանքան սկսելու որինակելի ժամկետներ են՝ բարձր լեռնային գոտում սեպտեմբերի 5-ը, իսկ մնացած գոտիներում սեպտեմբերի 15-ը:

66. Ամեն մի կոլխոզ յեղնելով յուր հողային պայմաններից և հողամասի դիրքից ինքն է վորոշում ցանքի վերջնական ժամկետները յեղնելով հետեվյալից.

ա) վոր ցանքը կատարվի ըստ գոտիների ամենանորմալ ու կարճ ժամկետում՝ 10—12 որում:

բ) վոր ամեն մի կուլտուրայի ու սորտի համար ընտրվեն ամենահարմար ժամկետները:

Յեղնելով վերոհիշյալից ցանքի հետեվյալ ժամկետները սահմանել.

Հողամաս	Բրիգադ	Ողակ	Կուլտուրա	Հեկտար	Սկիզբը	Վերջը

Յ Ա Ն Ք Ի Ն Ո Ր Մ Ա Ն

67. Մի հեկտարի վրա ցանելիք սերմի քանակը (նորման) կախված է հողի տեսակից ու դրությունից, կլիմայական պայմաններից, կուլտուրայից ու նրա սորտից, հողի խոնավության չափից, սերմի վորակից, ցանքի ժամկետից, հողի նախացանքային մշակումից և այլն:



75. Նորմաները վորոշված են ամենալավ ժամկետում և խոնավութեան հարմար պայմաններում կատարած ցանքի համար:

Չոր հողում, խոզանատեղերում և ուշ ժամկետներին ցաննելու և շաղացան անելու դեպքերում ցանքի նորմաները բարձրացրվում են:

Իաշտային ու միջին գոտիների լրիվ պարարտանյութ ստացած, ցելած խոպաններում ու գետահովիտներում ցանքսի նորմաները պակասեցրվում են մինչև 10 տոկոսի սահմաններում:

Ց Ա Ն Ք Ս

76. Կարեվոր նշանակութուն ունի սերմ գցելու խորությունը: Ջրովի հողամասում ցանքսի խորությունը պիտի լինի 4—5 սմ.: Խոնավութեամբ ապահոված անջրդի հողերում 5—6 սմ.: Այդ նույն խորութեամբ աշնանացան կատարել նաև սարահովիտներում, վորտեղ արտը սովորաբար չի ցրտահարվում ու յերաշտից չի տուժվում:

Իաշտային ու միջին գոտու անջրտի հողամասերում ցանքս կատարել 7—10 սմ. խորութեամբ:

Յեթե ցանքսի ժամանակ այդ գոտիներում հողի վերնաշերտը խոնավ է՝ սերմը գցվում է 7—8 սմ., իսկ յեթե չոր է՝ խորացվում է մինչև 10 սմ.: 6 սմ.-ից ավելի խորացնելը պետք է կիրառվի իբրև վերաշտի դեմ պայքարի առանձնահատուկ միջոցառում:

77. Ցանքսը կատարել շարքացանով 15—30 որ առաջ նախացանքային հերկ արած հողերը կուլտիվատորով կամ այլ փըխբացուցիչ գործիքով ու մեքենայով փխրեցնելուց ու ցաքաննելուց անմիջապես հետո:

78. Սովորական շարքացանք անելուց բացի խորհուրդ է արվում իբրև բերքատվութեան բարձրացման միջոցառում կատարել նաև խաչաձև շարքացանք:

79. Թույլատրել շաղացան կատարել խիստ թեթուցյունների վրա, այն տեղերում, վորտեղ անհնար է բանեցնել շարքացան մեքենան: Խոր ցանքսի սերմը հողում ծածկել խոզանավար գութանով, կամ թույլատրել ցելերի վրա արորով կուլտալ (բողազացանք):

80. Շարքացան մեքենաները ցանքից առաջ ստուգել և վորոշված ցանքսի նորմայի վրա կանգնեցնել: Աշխատանքի ընթացքում պարբերաբար ստուգել թե արդյոք մեքենան սահմանված չափով է սերմ գցում, թե վոչ: Այդ կարելի է իմանալ համեմատելով ծախսած սերմի ու ցանած տարածությունների քանակությունները:

81. Մի կուլտուրայից մյուսին, կամ մի սորտից մի այլ սորտի ցանելուն անցնելուց, մեքենան մաքրել սերմի մնացորդից, վորպեսզի տարբեր կուլտուրաներ կամ սորտեր չխառնվեն:

82. Մերմնաբուծարանները ցաննելուց մեքենայի յուրաքանչյուր 8—9 շարքից, սերմնանցքից, մեկը փակել, վորպեսզի սորտային քաղհանի ժամանակ այդ ազատ արանքով քաղհանավորները քայլին ու արտը կոխ չտան:

Այդ դեպքում ցանքսի նորման քչացնել 12 տոկոսով: Մերմնաբուծարաններում մի սորտը պետք է մյուսից հետո ցանել, արանքում թողնել ազատ, մեկուսացնող տարածություն:

Մերմնաբուծարանի չորս անկյունում ցցեր տնկել, վորոնց վրա ցուցատախտակ կպցնել՝ վրան գրած տարածությունը, սորտը, սերմի կտեղգորիան և ցանքսի ժամկետը:

83. Չհերկված դաշտում արորի տակ ցանք անելը (կուլտալը) արգելվում է:

84. Արաի ծլերը դուրս անելուց, վոչ ուշ քան մինչև նոյեմբերի մեկը լեռնային գոտում ու նոյեմբերի վերջին՝ մնացած գոտիներում ստուգում անցկացնել կուլտորի նախադահի, բրիզա դիրի ու ողակավարի մասնակցութեամբ և ակտ կապել արտերի դրութեան մասին, գրելով, թե քանի հեկտար գերազանց բուսնում ունի, քանիսը լավ, միջակ, վատ ու քանիսը չի ծլել:

Արտն ստուգվում է դուրս արած ծլերը տեղ-տեղ համրելով և վորոշելով թե մեկ քառակուսի մետրի վրա գցած սերմերից քանիսն են դուրս արել:

85. Արտերի դրությունը յերկրորդ անգամ ստուգել մայիսի մեկի վրա, դարձյալ համրելով թե մեկ քառակուսի մետրի վրա միջին հաշվով ցորենի կամ գարու քանի թուփ է մնացել:

Կտրած արտերը հանձնաժողովի կազմած ակտի հիման վըրա, կուլտորի վարչութեան վորոշմամբ պետք է վերացանել, բայց վոչ ի հաշիվ գարնանացանի պլանի:

86. Կոլխոզը ցանքի միջոցառումներէ հետեւյալ առաջադրանքներն ե սահմանում.

Միջոցառում	Քանակ	Բրիգադ	Ողակ	Հողամաս	Հեկտար
Շարքացանք					
Պաշտակ ցանք Ցանքի խորութիւնը					

Վ Ո Ռ Ո Գ Ո Ւ Ս

87. Զրովի հողերը աշնան ցանքս անելուց անմիջապես հետո ջրել: Ցանքի և ջրելու արանքը յերկար չպիտի քաշի, այլապես արտը նոսր կըրոսնի: Ցանքսի առաջին վոտոզումը (սափ սուվարը) պիտի կատարել հեկտարին շատ՝ մոտ 1500 խոր. մե տըր ջուր տալով: Լավ կլինի ցանքից առաջ արաթանելը:

88. Չոր յեղանակի ժամանակ, մինչև արտի բուսնելը, ծանր հողերում, կեղեվակալման առաջն առնելու համար, սափսուվարից հետո, հողի յերեսը թեթեւ չորանալուց զիգզագով մե կից յերկու հեռք շարքերին ուղղահայաց ցաքանել:

89. Յերկրորդ վոտոզումը տալ ցողունակալման սկզբին, մինչև ապրիլ ամիսը, իսկ յերրորդը հասկահանման սկզբին՝ մա յիսին: Բացառիկ յերաշտ տարիներին կարելի յե աշնանացանի արտը ջրել 4 անգամ:

90. Արտերը ձմեռումից դուրս են գալիս առհասարակ թուլացած, և յեթե նոր աճեցողութեան շրջան մտնելուց հողում բաւարար խոնավութուն չեն գտնում, ել ավելի յեն թուլանում, տեղ-տեղ արտը կտրում ե. դրա համար ել պետք ե ոգտագործել գարնանային բոլոր ջրերն ու սելերը և վորոշ անջրդի տաբաժութունների վրա ջրել աշնանացանը:

91. Կոլխոզն արտերը ջրելու հետեւյալ կարգն ե սահմանում.

Վոր ջուրը	Կուտուրան	Հողամաս	Բրիգադ	Ողակ	Հեկտար	Փամկեար

Յ Ա Ն Ք Ի Խ Ն Ա Մ Ք Ը

Աշնանացանի խնամքի միջոցառումներն են՝

92. Աշնան ձմեռային քաղհան, վորը պիտի կատարել նոյնամբեր, դեկտեմբեր ամիսներին ու փետրվարին:

93. Գարնան քաղհանը կատարել մինչև արտի ցողունակալումը՝ դաշտային գոտում ապրիլի առաջին կեսին, միջին գոտում՝ ապրիլի 2-րդ կեսին, բարձր լեռնային գոտում՝ մայիսին:

Բացառիկ դեպքերում թուլատրվում ե լրացուցիչ քաղհան կատարել նաև արտի ցողունակալման շրջանում:

Կարանտինային մոլախոտերը պետք ե հիմքից պոկել և հավաքելով այրել:

94. Սերմնաբուծարաններում մոլախոտերը քաղհանելուց բացի պետք ե պոկոտել նաև այլ կուլտուրաների կամ նույն կուլտուրայի կողմակի սորտերի թփերը:

Այս աշխատանքը կոչվում ե սորտային քաղհան և կատարվում ե լրիվ հասկահանումից հետո՝ ծաղկման շրջանում, մոմային հասունութեան սկզբին:

Սորտային քաղհան կատարողները պետք ե այդ գործին հմուտ լինեն և աշխատեն սերմաբուծ բրիգադավարի կամ ողակավարի անմիջական հսկողութեան տակ:

Քաղհանողները պիտի գնան շարքերի յերկարութեամբ՝ մի կողմի վրա 7—8 շարք քաղհանեն, ապա նույն շարքամիջով վերադառնան ու քաղհանեն մյուս կողմի վրա նույնքան շարքերը:

Սերմնաբուծարանները քաղհանելիս պիտի պոկոտել և ջրով լիքը գուլի մեջ ածել բոլոր այն բույսերը, վորոնց վրա մրիկ կա, աշխատելով ողում չփշրել հիվանդոտ հասկն ու բույսը:

95. Գարնան սկզբում ծանր հողերում բուսած արտերը յերկաթի զիգզագով ցաքանել, այլապես կեղեվակալած հողը

ճաքճքվում ե, խոնավութիւնը գոլորշիանում, բուսած արտը խեղդվում ե, սովածութիւնից թուլանում, գեղնում: Շատ բույ սեր մահանում են կամ այնքան հետ մնում, վոր բերք չեն կարողանում տալ: Հետեվաբար նման արտը շատ ցածր բերք ե տալիս կամ յերաշոյից չորանում ե: Նման արտերը փրկելու միջոց ե գարնանային ցաքանումը:

96. Արտի, նամանավանդ սերմաբուծարանի խնամքի միջոցներէց մեկը նրա սնուցումն ե: Խորհուրդ ե տրվում արտը սնուցել վաղ գարնանը, ինչքան կարելի յե շուտ, աղբաջրով կամ հանքային պարարտանյութերով:

Մնուցման համար պարարտանյութը պիտի շաղ տալ արտում ու անմիջապէս ցաքանել շարքերին հակառակ ուղղութիւմբ, պարարտանյութը մտցնել խոնավ յեղանակներին այն պէս, վոր մացնելուց հետո նրա վրա անձրև գա կամ հնարավոր լինի ջրել: Հեկտարին իբրև սնուցում տալ 2000 դուլլ աղբաջրի լուծույթ (մեկ դուլլ աղբաջրին 5 դուլլ ջուր): Հանքային պարարտանյութեր մտցնել՝

45—60 կգր. ազոտի,

60—90 կգր. ֆոսֆորի,

45 կգր. կալիումի հաշիով:

97. Քաղհանը կատարել ձեռքով պոկոտելով կամ ավելի լավ ե կոթավոր մետաղյա արտի քաղհանիչով, վորի բերանի լայնութիւնը 8 սմ.-ից ավել չպիտի լինի և այնքան սուր, վոր հեշտութիւմբ հողը խրվի, մոլախոտերն արմատից կտրի:

98. Մոլախոտերով վարակման դեմն առնելու համար պետք ե արտի չորս կողմը կամ սորտերի մեկուսացնող տարածութիւնները մինչև նրա վրա բուսած մոլախոտերի սերմերի հասունացումը հարել, դուրս տանել:

99. Հացահատիկային կուլտուրաների ամենավտանգավոր վնասատուն բլոճ-չերեպաշկան ե (վոթես): Դրա դեմ պայքար պիտի կազմակերպել ձմեւվա ընթացքում հետադոտված ու հայտնաբերված տարածութիւնների վրա հավեր արածացնելով մարտ, ապրիլ ամիսներին:

100. Դաշտային մկների դեմ պայքար տանել մասնագետի ղեկավարութիւմբ աշնանը և վաղ գարնանը, մինչև արտերի լրիվ թփակալումը, համատարած ձեվով թե ցանքսերում և թե խամերում:

101. Կոլտողը աշնանացանի արտի խնամքի հետեվյալ միջոցառումներն ե սահմանում

Միջոցառում	Կուլտուրա	Բրիգադ	Ողակ	Քանակը	Ժամկետը
Մշտն քաղհան					
Գարնան քաղհան					

ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ՏՐԱՄԱԽԱՉՈՒՄ

102. Ներսորտային տրամախաչումը գործադրվում ե իբրև սերմի վերարտադրելու կարողութիւնն ուժեղացնելու ազդումիջոցառում, հետեվապէս բերքատվութիւնը բարձրացնելու անհրաժեշտ միջոց:

Հացահատիկներն իրենք իրենց մեջ փոշոտվելով թուլակազմութիւն են ստանում, բնական պատահարներին ավելի վատ են դիմանում, վորովհետև նրանց սերմերը մի ծնողից են միայն հատկանիշներ ժառանգել, իսկ յեթե տարբեր ծնողներ լինեն, յերկուսից ել դիմացկունութիւն, վերարտադրելու ու այլ հատկանիշներ կժառանգեն՝ ավելի յեռանդոտ ու դիմացկուն կըլինեն:

Ներսորտային փոշոտումը պետք ե կատարել հատուկ հրահանգի համաձայն, միայն պետք ե հիշել, վոր տրամախաչումը կատարում են սերմնաբուծարանում ծաղիկը կրակելու՝ արական անդամները, առեջքների փոշանոթները կտրելու միջոցով: Ծաղկի կրտումը պետք ե սկսել այն ժամանակ, յերբ դեռ արտի 10 տոկոսն ե հասկահանել և այն պիտի տեվի վոչ ուշ քան 2—3 օր:

103. Կոլտողը ներսորտային տրամախաչման առաջադրանք ե սահմանում:

Կուլտուրա	Դաշտ	Բրիգադ	Ողակ	Քանի հատիկ	Ժամանակը

104. Ապրորացիան կուլտուրայի ու ցանքսերի սորա-
յին մաքրութեան հաշվառքն և արտը կանգնած ժամանակ: Ապ-
րորացիայի յեն յենթարկվում բոլոր սերմնարուծարաններն ու
սորային ցանքսերը՝ լինի դա սելեկցիոն, թե տեղական: Ապ-
րորացիան կատարում են հատուկ կուրսեր ավարտած ազրոնոմ-
ները կոլխոզի պատասխանատու ներկայացուցչի մասնակցու-
թյամբ: Սորային դրության այս հաշվառքը ձևակերպվում է
ապրորացիոն ակտով:

Ապրորացիայի համար հնձած խուրձերը պետք է կոլխո-
զում ամենայն զգուշությամբ պահել, մինչև այդ աշխատանքը
կատարվի ավագ ապրորատորի կամ տեսչի կողմից, բայց վոչ
ավել քան 6 ամիս ժամանակով:

Բ Ե Ր Ք Ա Շ Ա Վ Ա Ք

105. Աշնանացան հացահատիկների հունձն սկսել մոմային
հասունության վերջին շրջանում, հավաքելով առաջին հերթին
թափվող սորտերը: Չսպասել, վոր ամբողջ արտը հասնի, ամեն
որ ստուգում անցկացնել և հասունացած արտամասերն առան-
ձին-առանձին հնձել: Բերքահավաքը կոմբայնով կատարել արտի
լրիվ հասունացման շրջանում: Սերմնարուծարանները հնձել լրիվ
հասունության շրջանում:

106. Հունձը կատարել սեղմ ժամկետներում՝ հասունացու-
մից սկսած 7—8 օրվա ընթացքում: Հնձի ուշացնելը խոշոր
կորուստների պատճառ է դառնում:

107. Հունձն անել ամեն մի արտի համար կոլխոզի վարչու-
թյան վորոշած բարձրության վրա, ըստ հնարավորին արտը
կտրել տակից, թողնելով կարճ խողան:

108. Բոլոր արտերում, մանավանդ սերմնարուծարաններում
հնձած խրձերի կեմը չի կարելի ուրիշ արտից քանդել, լինի
դա նույն, թե այլ կուլտուրայից, վորպեսզի չխառնվեն սորտե-
րըն ու կուլտուրաները և արհեստականորեն չախպոտվեն սեր-
մացուները:

109. Բերքահավաքի մեքենաների և մասնավորապես կոմ-
բայնի յետեվից խողանը սանրող ու ընկած հասկերը հավաքող
փոցխեր հարմարացնել ու հատիկ վորսիչներ կպցնել: Սանրերն
ու վորսիչները հաճախակի ստուգել և լցվելուց թափել:

110. Կոմբայնով բերքը հավաքելու համար առանձնացրած
արտերում նախքան կոմբայնի աշխատանքն սկսելը, պետք է ձեռ-
քով հնձել արտի ծայրերը և պակած տեղերը, թե չէ կոմբայնը
տակովը կանի այդ մասերն ու կորուստի պատճառ կդառնա:

111. Հնձելուց ու խուրձն արտերից դուրս տանելուց հետո
կազմակերպել և անցկացնել թափված հասկերի հավաքելը ձիու
փոցխերով ու ձեռքով:

112. Ձեռքով հնձած խրձի փաթը կապած տեղում պիտի
լինի 150 ս.մ.: Փոքրիկ խրձերը խոտանել:

113. Հնձած խրձերը նույն օրը պետք է դարա դնել, փանջա-
քել 20 խրձից (2 փանջաք) վոչ պակաս քանակով դասավորելով
յերկու կողմից 10-ական խուրձ հասկերը ներսի վրա, դեմ առ
դեմ, խրձերը մեկը մյուսի հասկային մասով մասնակի ծածկած,
այնպես վոր անձրեվները ներս չծծվեն ու չթրջեն տակի խրձ-
ները: Հնձած հատիկը փանջաքում պահել առնվազն 2-3 օր:
Իսկ լրիվ հասունացած հացահատիկի խրձերը փանջաքած այդ-
քան պահելն անհրաժեշտ չէ:

114. Վաղ առավոտյան և թաց արտի հնձածը մի քանի
ժամով թողնել կուտակներում (6-9 ճանկերով) վոր չորանա ու
հետո խուրձը կապել: Նման պարագաներում խրձերը գյուլ դնել,
այսինքն հասկերը դեպի վեր հողի վրա ցցել ու յերեկոյան դեմ
դարա դնել: Ղարաներում փանջաքած խրձերը, թրջվելու դեպքում
նույնպես գյուլ դնել ու չորացնել:

115. Խրձերը տեղափոխել ֆորմալինի լուծույթով ախտահանած
սայլերով, չարգախային մասը խտացրած, այնպես ծածկած, վոր
հասկ ու հատիկ չթափվի:

116. Հնձատեղում կրակ վառելն արգելվում է, դրա համար
պետք է հատուկ տեղ առանձնացել դաշտային հանգրվանին
կից, չորս կողմը բահած ու մեկուսացրած տեղ:

117. Անասնակերի կամ ցամաքի համար ոգտագործելու
նպատակով յերկար խողանը հարել ու հավաքել:
Պարտադիր կերպով պետք է հավաքել նայիվ կոմբայնի ծղնոտը
(քուլաշը), դուրս կրել դաշտից ու դեզեր դնել:

118. Ամեն մի ողակ յուր արտի խուրձը պիտի դեզի ա-
ռանձին-առանձին, այնտեղ, վորտեղ կալավելու չէ: Միևնույն
բրիգադի ողակներն իրենց խրձադեզերը դասավորում են իրա-
բից մոտիկ, այնպես, վոր հնարավոր լինի միասին կալել, ըստ
ողակների հաշիվ պահել:

119. Կոլխոզը հնձի հետեւյալ ուրացուցային առաջադրանքներն և սահմանում.

Հողամաս	Կուլտուրա	Բրիգադ	Ողակ	Հեկտար	Փամկետ		Քանի որում
					սկիզբ	վերջ	

Կ Ա Լ Ս Ո Ւ Մ

120. Հացահատիկի կալուստն սկսել վոչ ուշ քան հունձն սկսելուց յերեք ուր հետո և այնուհետև թույլ չտալ հնձի ու կալսման աշխատանքների մեջ ճեղքվածք առաջանա, այսինքն ինչքան հնձվում և, համարյա նույն քանակությամբ ել պետք և կալսվի:

121. Կալսման տեղերը պետք և փոխել զնասատուներով վարակվելու հնարավորություններից խուսափելու նպատակով և այդ նոր տեղերում խրձադեղեր դնել զլուխը տանիքաձեւ վեր բերած, վոր չկաթի ու խրձերը չթրջվեն:

122. Կալսման տեղերում ունենալ կազմ ու պատրաստ, մարդկանց ամրացրած, հակահրդեհային լրիվ սարքավորում (ջրով լիքը տակառներ, ջրմուկ, յերկաթե թիեր, սանդուխք և այլն) ու հերկել խրձադեղերի շուրջը յերեք մետրից վոչ պակաս շերտով:

123. Արգելվում և կախելուց հետո մնացած քոչալը (լրիվ չկալված հասկերը) խառնել դարմանի հետ: Այն պետք և խառնել նոր կալսվող խրձերի հետ ու նորից կալսել:

124. Դարմանի հետ հատիկը տանուլ չտալ, դրա համար, կալ կալսողներ նշանակել փորձված կոլխոզնիկների և ամեն ուր կալսելուց հետո ստուգել դարմանը: Մինչև ստուգումը դարմանը կալից չքաշել և հարկավոր դեպքում ողակավարի կամ բրիգադավարի պահանջով կրկին անգամ քամել դարմանը:

125. Մեկ սորտ կամ կուլտուրա կալսելուց հետո ամեն անգամ կալսիչը կամ կալը սրբել, մաքրել մնացորդներից, վորպեսզի սորտերը չխառնվեն, կողմնակի սորտերով չաղբոտվեն:

126. Կալսումը ժամանակին ավարտելու համար կոմբայնները հունձը վերջացնելուց հետո պետք և աշխատեն հացահատիկի կալսման աշխատանքների վրա:

127. Կոմբայնից, կալսիչից ու կալից ստացված հացահատիկը պետք և տեղն ու տեղը կշռել, ապա յեթե կեղտոտ և, թաց՝ չորացնել, մաքրել ու հետո մեկել կշռել և ուղարկել պահեստ կամ մթերման հանձնելու պահեստապետի հաշվեգրքով մուտք գրելուց հետո:

128. Բերքահավաքին մասնակցող բոլոր մեքենաները, գործիքներն ու ջվակեղենը նախորոք արտահանել ու հետո բանեցնել:

129. Կոլխոզը աշնանացանի բերքահավաքի հետեւյալ միջոցառումներն և սահմանում.

Միջոցառում	Բրիգադ	Ողակ	Քանակ	Փամկետ	
				սկիզբ	վերջ

130. Մերմաբուժարանից ստացված բերքը պիտի կալսվի առանձին ու ամենայն զգուշությամբ, վորպեսզի սորտերը չջխառնվեն: Յեթե խրձերի մեջ նկատվում են ուրիշ կուլտուրաների կամ կողմնակի սորտերի խառնուրդ հասկեր, այդ դեպքում խրձերը բաց անել, այդ խառնուրդ հասկերը ջոկել, քաշել ու առանձնացնել: Այս կլինի լրացուցիչ սորտային մաքրում և դրանով կբարձրացվի սորտմաքրության տոկոսը:

131. Բացի դրանից պետք և կալում հասկընտրություն կատարել, փունջ անել պալիք տարվա սերմնաբուժարանի համար: Բոլոր հասկերը միատեսակ լինել չեն կարող, վորովհետև բնության մեջ չկան յերկու անպայման իրար նման ձեւեր: Իրա համար ել հասկընտրությունը մեխանիկորեն չպիտի կատարվի, ամենայն զգուշությամբ ու ստեղծագործորեն, անհատական մտտեցում ցույց տալով ամեն մի հասկին:

132. Բարձր վորակի սերմ ե ստացվում, յերբ հասկի գագաթային մասը ձեռքով կտրում են ու սերմացվի համար ողտագործում մեծահատիկ հասկի մասը: Այդ աշխատանքը կոչվում է կորտ: Կորտը պիտի անել փունջ արած հասկերի վրա:

133. Ներսորտային տրամախաչումից ստացած հասկերը պետք է առանձին հնձել, կալսել ու պահել և բազմացնել:

134. Կոլխոզը բարձր վորակ սերմ ստանալու հետեվյալ առաջադրանքներն է սահմանում.

Ինչ միջոցով	Ինչ կուլտուրա	Վոր սորտը	Վոր բրիզազ	Վոր ողակ	Քանի կիրոզը

135. Պահեստները, մինչև հացահատիկի բերքահավաքը սկսելը, պետք է վերանորոգել ու ախտահանել, մեջը յեղած հին հացահատիկը դուրս բերել, քամհարել և ստուգելուց, յեթե մեջը վնասատուներ չկան, նորից ամել պահեստը: Վարակված հացահատիկը դեղերով անվնաս դարձնել և հետո պահեստ ամել:

136. Վարակված պահեստում վամ վարակված հացահատի կըն ընդունելն արգելվում է:

137. Նորմայից բարձր խոնավություն ունեցող հացահատիկը պահեստում ընդունել միայն չորացնելուց հետո:

138. Պահեստապետը հացահատիկն ընդունելիս պարտավոր է կռնել և անդորրագիր տալ հանձնողին:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

139. Կոլխոզնիկների կողմից կատարվող աշխատանքներն ամեն օր պետք է ընդունի բրիզագիրը: Ագրոկանոնների և կոլխոզի սահմանած վորակական ցուցանիշների խախտումով կատարած աշխատանքը խոտանել, դրա համար կատարողին աշխոր չգրել մինչև չուղղի պակաս կողմը, իսկ չանելու կամ արգեն ժամանակն անց կացած լինելու դեպքերում՝ մեղավորներին պատասխանատվության յենթարկել:

140. Կոլխոզի նախագահը պարտավոր է ամեն մի տեսակի աշխատանք տվյալ հողակտորում (սառնա) վերջանալուց հետո, վոչ ուշ քան 3 օրում, բրիզագավարից գործն ընդունել ստուգելով քանակն ու վորակը, գրելով այդ մասին համապատասխան ակտ:

Աշխատանքների աշխատանքներն ըստ հողակտորների նախագահը պիտի պարտադիր կերպով ընդունի ցելը վերջացնելուց, կրկնահերկելուց, ցանքան անելուց, ծիլերը դուրս անելուց, քաղհանելուց, հնձելուց ու հասկը հավաքելուց հետո: Բացի դրանից ընդունում է նաև միջանկյալ աշխատանքները:

Աշխատանքն ընդունելիս նախագահը կարող է վիճել խընդիրների համար դիմել վորակի տեսչի ոգնությանը:

141. Աշխատանքը կատարել մշտական ողակներով, վորոնք պիտի ունենան ա՛րացրած հողամաս, ինվենտար, լծկան ու արտադրության այլ միջոցներ:

142. Արտադրաչափերը, մեքենաների աշխատեցնելու տեվողությունը և մի տարվա համար սահմանած առաջադրանքների չափը պետք է կոլխոզը վերանայի գյուղատնտեսական յուրաքանչյուր կամպանիայի նախորդակին (ցել, ցանք, քաղհան, բերքահավաք և այլն) և պահանջվող համապատասխան ճշտումներ մտցնի:

143. Կազմակերպել ցանքսի, խրճաղեղերի ու պահեստի պաշտպանությունը հատուկ պահակների միջոցով:

144. Յանքսերն ըստ հողամասերի զասավորելու և ըստ այնմ ագրոտեխմիջոցառումները ճիշտ ստուգելու համար կոլխոզում պահել և լրացնել «դաշտերի պատմության գիրքը», վորի մեջ գրի առնել յուրաքանչյուր դաշտում կատարվող աշխատանքները ժամանակագրական կարգով:

145. Սույն ագրոկանոնների կիրառման հսկողության պարտականությունը դրվում է Ռայստվեաի գործկոմի նախագահի, Գյուղնովետի և կոլխոզի նախագահների, շրջհողբաժնի վարիչի, ագրոնոմների ու դաշտավարական բրիզագավարների վրա:

Պատ. խմբագիր՝ Ս. ԲԱՐՍԵ
Տեխ. խմբագիր՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մրբագրիչ՝ Հ. ԱՎՃՅԱՆ

Գրաչար՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա 1940 թ.
Ակտ № 766
Վկլաճ. լ. _____

«Ազգային գրադարան»



NL0278961

14727

40357

	Арм.
	2-6527a